«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
**Պատմություն (8-րդ դասարան)**

Պատասխաններ

1. Որտեղի՞ց է վերցված հայերեն թարգմանված առաջին գրավոր նախադասությունը.

*«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»* կամ աշխարհաբար՝ *«Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը»*. (1.0)

_Աստվածաշունչ, Գիրք Առակաց___

2. Մայրաքաղաքներից ո՞ր երկուսը չեն գտնվում Մեծ Հայքի այս նահանգում: Ո՞ր նահանգն է առանձնացված: (1.0)



1. Վան, Վաղարշապատ
2. Տիգրանակերտ, Երվանդաշատ
3. Վան, Տիգրանակերտ
4. Կարս, Անի

_Առանձնացված էԱյրարատ նահանգը _

3. Այս պատմիչի անունը նշանակել է «Բարի լուր բերող»: Նա եղել է ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Տրդատ թագավորի ժամանակակիցը: Ո՞մ մասին է խոսքը, ինչպե՞ս էր կոչվում նրա աշխատությունը և ի՞նչ կարևոր իրադարձություններ է նա նկարագրել այդ աշխատության մեջ: (1.0)

Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, 4-րդ դարի դեպքերն են, հատկապես քրիստոնեության մուտքը Հայաստան, Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմյանց կույսերի չարչարանքների, նրանց դեմ Տրդատ Գ-ի պայքարը և քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման պատմությունը:

---

4. Հայերի մղած նշանավոր ճակատամարտերն ու դրանց թվականները լրացրեք աղյուսակում: (2.0)

Տիգրանակերտի, Ներսեհապատի, Ավարայրի, Վարդանակերտի, Արածանիի, Ձիրավի, Սևանի, Ակոռի

| | Ճակատամարտի անվանումը | Տարեթիվը |
|---|---|---|
| Հայ-հռոմեական | Տիգրանակերտ | Ք.ա. 69թ., հոկտեմբերի 6 |
| | Արածանի | Ք.ա. 68թ. |
| Հայ-պարսկական | Ներսեհապատ | 482թ. |
| | Ավարայր | 451թ. |
| | Ձիրավ | 371թ. |
| | Ակոռի | 481թ. |
| Հայ-արաբական | Վարդանակերտ | 702թ. |
| | Սևան | 921թ. |

5. Կատարել ինքնապաշտպանական կռիվների, դրանց տարեթվերի, վայրերի, ղեկավարների համապատասխանեցում: Պատասխանները նշել ըստ առաջին սյունակում տրված հերթականության: (2.0)

| N | Ինքնապաշտպանական մարտեր | N | Վայրը | N | Տարեթիվը | N | Ղեկավար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքամեջի ինքնապաշտպանությունը | 1 | Արևմտյան Հայաստան | 1 | 1915թ. սեպտեմբեր | 1 | Եսայի Յաղուբյան |
| 2 | Այգեստան թաղամասի մարտերը | 2 | Թուրքիա | 2 | 1915թ. հունիս | 2 | Մկրտիչ Յոթնեղբայրյան |
| 3 | Մուսա լեռան ինքնապաշտպանությունը | 3 | Վան | 3 | 1915թ. ապրիլ | 3 | Արմենակ Եկարյան |
| 4 | Շապին Գարահիսարի կռիվները | 4 | Սուետիա | 4 | 1915թ. հուլիս | 4 | Հայկ Կոսոյան |
| 5 | Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերը | 5 | | 5 | | 5 | Ղուկաս Տեռվլեթյան |

1) 1 3 4 5
2 4 2 1
3 1 1 3

2) 1 3 3 4
2 3 3 3
3 4 4 1

3) 1 4 3 3
2 3 2 3
3 4 3 2

4) 1 4 3 2
2 3 2 3
3 2 4 5

| | | | |
|---|---|---|---|
| 4 2 2 2 | 4 1 2 5 | 4 2 1 1 | 4 2 1 4 |
| 5 3 3 4 | 5 2 1 2 | 5 1 2 4 | 5 1 2 1 |

**6. Ընդգծե՛ք տեքստում հանդիպած սխալները և ուղղե՛ք:** 1828թ. փոտրվարի 10-ին Ադրիանապոլսում կնքվեց ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը: Այդ պայմանագրով Արևմտյան Հայաստանի ևս մի ընդարձակ տարածք՝ Երևանի ու Նախիջևանի խանություններով անցավ Պարսկաստանին: Սահմանի մի հատված անցնում էր Ախուրյան գետով: **(2.0)**

_Թուրքմենչայ___Արևելյան_____Ռուսաստանին____Արաքս___

**7. Այս արքաներն ստացել են մականուններ: Լրացրե՛ք դրանք նրանց անվան կողքին՝ նշելով նաև կառավարման տարիները: (3.0)**

Աշոտ Երկրորդ_Երկաթ(914-928)

Լևոն Երկրորդ_Մեծագործ (1198-1219թթ.)

Տիգրան Երկրորդ_Մեծ (Ք.ա.95-55թթ.)

Աշոտ Երրորդ_Ողորմած (953-977թթ.)

Տրդատ Երրորդ_Մեծ (298-330թթ.)

Արտաշես Առաջին_Բարեպաշտ (Ք.ա.189-160թթ.)

**8. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը: (3.0)**

1. Միապետություն

2.Կոալիցիա

3. Երկիշխանություն

4. Դաշնային հանրապետություն

5.Սահմանադիր ժողով

6. Հրովարտակ

ա) Դիմում-հայտարագիր, կոչ, որը ենթակա է կատարման

բ) Պետական կառավարման համակարգ, որի պայմաններում գոյություն ունեն երկու իշխանություններ

գ) Համաժողով, որը սահմանում է պետության կառավարման ձևը և մշակում երկրի հիմնական օրենքը

դ) Տարբեր կուսակցությունների անդամներից կազմված կառավարություն

ե) Պետական կառավարման ձև, որի մեջ մի քանի հանրապետություններ միավորվում են մեկ դաշնակցային պետության մեջ

զ) Պետական կառավարման ձև, որի գլուխ կանգնած է անսահմանափակ իշխանությամբ օժտված անձը

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Զ | Դ | Բ | Ե | Գ | Ա |

**9. Եռապետության հայտնի անդամներից ու՞մ են պատկանում այս խոսքերը, որոնք հետագայում արդեն դարձան թևավոր խոսքեր: Նշե՛ք ևս մեկ հայտնի դարձած թևավոր խոսք, որ կապված է այս նշանավոր մարդու անվան հետ: ( 2.0)**

Մի անգամ, երբ *նա* անցնում էր գալլական մի փոքրիկ գյուղի միջով, նրա զինակիցներից մեկը կատակելով հարցրեց.

-Մի՞թե Հռոմից այսքան հեռու գյուղում էլ պայքար է գնում իշխանության և առաջինը լինելու համար։

-Ես գերադասում եմ լինել առաջինն այստե՛ղ, քան երկրորդը՝ Հռոմում,-ամենայն լրջությամբ հնչեց պատասխանը։

--Առաջին Եռապետության անդամներից Հուլիոս Կեսար----------

-Ռուբիկոնն անցած է, վիճակը՝ գցված:------------------------------------------------------------------------
-կամ-Եվ դու՞, Բրուտոս:---------------------------------------------------------------------------------------
-կամ---Մենք պարտված կլինեինք, եթե հակառակորդը հաղթել կարողանար____________________

**10. Ովքե՞ր են նկարներում պատկերված անձինք: Ի՞նչ տիտղոս է նրանց միավորում: (3.0)**

1)  2)  3)  4) 

1)------Կառլոս Մեծ----------------------------------------------------

2)------Տիգրան Երկրորդ Մեծ----------------------------------------

3)------Պետրոս Մեծ---------------------------------------------------

4)------Ալեքսանդր Մեծ----------------------------------------------

-------Միապետներ, ովքեր կրել են *Մեծ* տիտղոսը---------------